# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
# ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
# ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայությունն (ՓԾ) առանցքային դերակատարություն ունի ազգային անվտանգության համակարգում՝ բնակչության անվտանգության ապահովման և անվտանգության երաշխիքների ձևավորման հարցերում:

Դիտարկելով ՆԳՆ ՓԾ քաղաքականությունն առհասարակ, կարող ենք նկատել, որ այն տարիների ընթացքում ձևավորվել է տարբեր գործոնների ազդեցության ներքո, մասնավորապես.

- ✓ **Աշխարհագրական դիրքը**՝ այս հանգամանքը «հուշել» է, թե որ վտանգների ուղղությամբ պետք է առավել ակտիվ աշխատի գերատեսչությունը (սեյսմիկ վտանգ, կլիմայական փոփոխություններ, տեխնածին վթարներ և այլն):
- ✓ **Պատմական փորձը**՝ Հայաստանում ժամանակի ընթացքում գրանցվել են խոշոր աղետներ: Այդ աղետները ոչ միայն ունեցել են ուղղակի, ավերիչ հետևանքներ, այլ նաև՝ ինչ-որ չափով նպաստել են որպեսզի ձևավորվի, ապա զարգանա բնակչության պաշտպանության համակարգը:
- ✓ **Միջազգային համագործակցություն**. 1988 թ.-ի երկրաշարժն ազդակ էր, առ այն, որ միջազգային համագործակցությունը այսուհետ պետք է լինի ընտրված քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը, քանի որ մեր երկիրը միայնակ ի զորու չէր վերացնել լայնամասշտաբ աղետալի հետևանքները:

**Անցած երեք տարիների ընթացքում** ՀՀ ՆԳՆ ՓԾ քաղաքականությունը ենթարկվել է մի շարք փոփոխությունների՝ ուղղված արտակարգ իրավիճակների արձագանքման արդյունավետության բարձրացմանը, աղետների ռիսկերի նվազեցմանը (ԱՌՆ) և քաղաքացիական պաշտպանության (ՔՊ) համակարգի ամրապնդմանը:

Մեր կողմից առանձնացվել են ՓԾ քաղաքականության հիմնական ուղղությունները.

1. **Միջազգային համագործակցության ամրապնդում**, **ստանդարտեցման գործընթացների ձևավորում**: Այս ուղղությունն ամենակնառու կետերից է վարվող քաղաքականության մեջ: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է ինչպես

աղետների ռիսկերի կառավարման, այնպես էլ քաղաքացիական պաշտպանության ոլորտում միջազգային նախագծերին և նախաձեռնություններին: Ինչը թույլ է տալիս փորձի փոխանակում կատարել այլ երկրների հետ, ձեռք բերել ժամանակակից սարքավորումներ և ներդնել առաջադեմ տեխնոլոգիաներ: Օրինակ, Թվինինգ ծրագիրը, որը մեկնարկել էր 2020 թ.-ին էական ազդեցություն ունեցավ Երկրաշարժից դիմակայունության բարձրացման հարցում: Ներկայումս Գերատեսչությունը շարունակում է ակտիվորեն համագործակցել ինչպես ՄԱԿ-ի և ենթակայությամբ գործող ոլորտային կառույցների, ԵՄ երկրների, այնպես էլ տարածաշրջանային երկերների, միջազգային կազմակերպությունների հետ, կարևոր դերակատարություն ունի Սենդայի գործողությունների ծրագրի շրջանակում:

2. **Օրենսադրական բարեփոխումներ:** Գերատեսչությունը հետևողականորեն բարելավում է իրավաօրենսդրական դաշտը, ինչը թույլ է տալիս արդիականացնել քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի կառավարման ռազմավարություններն ու միջոցառումները, գնալ համաշխարհային զարգացումներին և պահանջներին համահունչ: Մասնավորապես, կարևոր է այն, որ ոլորտը կարգավորող 2 առանցքային փաստաթուղթ վերանայման փուլում են՝ «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքը և «Աղետների ռիսկերի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքի նախագիծը:

3. **Տեխնիկական, տեխնոլոգիական բազայի արդիականացում**: Վերջին տարիներին զգալիորեն թարմացվել և համալրվել է ՓԾ տեխնիկական հնարավորությունները՝ թարմացվել և համալրվել են հրշեջ-փրկարարական մեքենաները, սարքավորումներն ու փրկարարական գույքը: Համակարգը վերազինվել է նոր հրշեջ մեքենաներով, որոնողակափրկարարական արդի գործիքներով, կապի սարքավորումներով և այլն: Ինչը հնարավորություն է տվել հրշեջ-փրկարարներին գործել առավել արդյունավետ, արձագանքել օպերատիվ, լուծել ավելի բարդ խնդիրներ:

   Զարգացման այս գիծը, ոչ միայն նկատելի է պաշտոնական հրապարակումներից, այլ նաև սույն վերլուծության շրջանակում հարցված, ներկայումս համակարգում ծառայող փրկարարների դիտարկումն է:

4. **Արտակարգ իրավիճակների նախազգուշացման և վաղ ազդարարման համակարգերի ներդրում և կատարելագործում**: Թերևս սա կարելի է համարել

նախարարության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը, քանի որ վերջին տարիներին ՀՀ բոլոր մարզերում /առավել ևս սահմանամերձ բանակավայրերում/ արդիականացվում են ազդարարման համակարգերը, ապահովվում է շչակների առավելագույն ծածկողականություն: Մշակվում են բնական բնույթի աղետների և ռազմական վտանգներից վաղ ազդարաման համակարգեր, ինչը թույլ է տալիս բնակչությանը ժամանակին տեղեկացվել և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր: Ինչպես նաև ժամանակի ընթացքում կառավարման միասնական համակարգը ևս կատարելագործվում է և ՃԿԱԿ այսօր ավելի արդյունավետ և օպերատիվ է աշխատում, քան տարիներ առաջ:

5. **Կադրային քաղաքականության բարեփոխումներ**:

5.1 *Մասնագիտական վերապատրաստումներ*: Վերջին տարիներին ինտենսիվ են դարձել փրկարար ծառայողների, աշխատկիցների վերապատրաստման տարատեսակ ծրագրերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում որոնողափրկարարական նոր մեթոդների, առաջին օգնության և հատուկ տեխնիկայի հետ աշխատելու ուսուցմանը, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի հիման վրա նոր մոտեցումների, մեթոդների տեղայնացմանը:

5.2 *Կադրային քաղաքականության թափանցիկություն ու մոտիվացիա*: Անդրադառնալով վերջին 3 տարիներին կատարված բարեփոխումներին պետք է առանձնացնել նաև այս ուղղությունը, քանի որ պաշտոնների զբաղեցումը տեղի է ունենում մրցութային կարգով և նվազեցվում են որոշումների ընդունման մեջ՝ անձնական մոտեցումները: Ինչպես նաև մեջբերելով փրկարարների հարցման տվյալներն առանձնացնենք կամավոր ատեստավորման համակարգի ներդրումը, հնարավորություն է տվել ծառայողներին ապահովել մասնագիտական աճ, աշխատավարձի էական բարձրացում և մոտիվացիա:

6. **Փոխգործակցության ամրապնդում այլ գերատեսչությունների, ոլորտի շահառուների հետ**: Փրկարար ծառայությունը ներկայումս ակտիվորեն համագործակցում է պետական այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ: Փոխգործակցությունը նպաստում է ԱԻ և ՔՊ ոլորտներում դերերի և գործառույթների հստակ բաշխմանը, ԱՌԿ ազգային ռազմավարության դրույթների կատարմանը, ինչպես նաև

հնարավորություն է տալիս լիազոր մարմնին համակարգել գործողություններն արտակարգ իրավիճակներում, բարելավել արձագանքման արդյունավետությունը:

7. **Թվայնացում**: Համակարգում վերջին տարիներին կարելի է առանձնացնել նաև այս ուղղությունը, մասնավորապես ներդրվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ ռեսուրսները կառավարելու, տվյալներ հավաքելու և վերլուծելու և բնակչության հետ փոխգործակցության համար, համալրվում և բարելավվում է վիճակագրական բազաները, հասանելի է դառնում բնակչության ուսուցման նյութերը, ՆԳ նախարարության ձևավորումից հետո արդիականացվել է նաև կայքը և դարձել կիրառվող:
8. **Տեղեկատվական թափանցիկություն, քաղաքացիական վերահսկողության հնարավորություն, հասանելիություն**: Վերջին տարիներին հատուկ ուշադրություն է դարձվում հանրության հետ տարվող աշխատանքներին, կարելի է նկատել, որ հանրությունը ստանում է օպերատիվ տեղեկատվություն արտակարգ իրավիճակների վերաբերյալ, ուսուցողական ցուցումներ: Քաղաքացիների էլեկտրոնային, թղթային նամակրությունն ու ՃԿԱԿ կատարած զանգերը ստանում են արագ արձագանքում: Արդյունքում բնակչության մոտ աճել է հանրային վստահությունը ՓԾ նկատմամբ: «Սուրմալուի» և «Ջրածածկման» ցավալի դեպքերը տեսանելի դարձրեցին փրկարար-բնակիչ միասնական գործելաոճը՝ հանուն մարդկային կյանքերի փրկության:

   Այս բաժնում կարող ենք խոսել նաև մեդիադաշտի հետ տարվող ՆԳՆ ՓԾ հետևողական աշխատանքները, որոնք միտված են ԱԻ կանխարգելման, արձագանքման, ռիսկերի կառավարման վերաբերյալ ստույգ և գրագետ տեղեկատվության տարածմանը:

Իհարկե, ՀՀ ՆԳՆ ՓԾ քաղաքականությունը նշված դրույթներով չի սահմանափակվում, ունի հետևողական զարգացման միտում, սակայն այնուհանդերձ ըստ մեզ առկա են նաև որոշակի խոչընդոտներ, որոնք այն կամ այլ կերպով ազդում են ՓԾ դրված խնդիրների լուծման վրա: Մասնավորապես, ըստ մեզ դեռևս որոշակիորեն առկա է բարձր որակավորում ստացած կադրերի պակաս, բյուջետային սահմանափակումներ:

**ՀՀ ՆԳՆ ՓԾ վարած քաղաքականության ազեցությունը երկրի զարգացման վրա**

Ըստ մեր դիտարկումների ՓԾ հետևողականության շնորհիվ, համաձայն սիներգայի օրենքի, նկատելի է դառնում նաև երկրի սոցիալ-տնտեսական և այլ ասպեկտների վրա գերատեսչության ուղղակի և անուղղակի ազդեցությունը:

- Վերջին տարիներին աղետների ռիսկերի կառավարման պլանավորում է իրականացվում ոչ միայն պետական, մարզային, համայնքային մակարդակներում, այլ նաև օբյեկտային՝ անգամ մասնավոր հատվածը սկսել է կարևորել դիմակայունության բարձրացման միջոցառումները, ԱՌՆ գործընթացները:
- Բնակչության անվտանգության գիտակցման մակարդակի բարձրացումը գերատեսչության հաջորդ ձեռքբերումն է: ՀՀ քաղաքացիների վարքագծի մեջ նկատվում են դրական փոփոխություններ, որոնք բխում են բնաչության ուսուցման արդյունավետ ծրագրերից:
- Պետրական կառույցներն առավել զգոն են դարձել ՔՊ և ԱՌՆ միջոցառումների պլանավորման, օրենսդրական պահանջների կատարման հարցերում:

*Եվ ամենակարևոր փոփոխությունը, որը կարելի է հպարտությամբ առանձնացել այն է, որ այսօր մեր երկրի ՓԾ դարձել է էտալոնային մոդել: Հայաստանը միջազգային ասպարեզում դիտարկվում է ոչ թե օգնության կարիք ունեցող երկիր, այլ՝ օգնություն տրամադրող երկիր: Մեր փրկարարների գործողությունները Սիրիայի և Թուրքիայի ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման ժամանակ ասվածի վառ ապացույցն են:*

*Ճգնաժամային կառավարման մասնագետ՝*
*Անի Տերտերյան*